

ՍՈՒՍԱՆՆԱ ԱՐԱԶՅԱՆ

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

abazyan-susanna@rambler.ru

DOI: 10.54503/978-5-8080-1587-6-350

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԳՐԱՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐ

Բանալի բառեր - ազգային, քննադատություն, հոդված, արդիական, գնահատական, դաստիարակիչ, համոզմունք:

Ամփոփում

Բազմաշերտ է Ավետիք Իսահակյանի գրաքննադատական ժառանգությունը: Այն ընդգրկում է ինչպես հայ դասականների, այնպես էլ իր ժամանակակիցների և համաշխարհային գրականության արժեքների վերլուծությունն ու գնահատականը: Իր քննադատական հոդվածներում մեծ փիլիսոփան հրաշալիորեն համադրել է ազգային ինքնության, հայ լեզվի և գրականության, հայրենասիրության հարցերը, համաշխարհային գրականության գաղափարական ազդեցությունը, գեղարվեստական նորարարությունը: Առաջնորդվելով «Քննադատը դատավոր չէ, այլ խորհրդատու» սկզբունքով՝ Վարպետն իր բոլոր քննադատական հոդվածներում դառնում է գրողի ուսուցիչն ու «ուղեկիցը»՝ միաժամանակ ուսուցանելով, որ գրական վերլուծությունը պետք է օգնի գրողին և ուղղորդի ընթերցողին՝ խորությամբ հասկանալու ստեղծագործության բովանդակությունը, բարոյական ու դաստիարակչական արժեքը, ամրապնդի ազգային ինքնագիտակցությունը և արժանի հայ գրականության դերը համաշխարհային գրականության համատեքստում:

Իսահակյանի քննադատական ժառանգությունը ոչ միայն գրականության գնահատում է ու խորագին վերլուծություն, այլև մշակութային խորհրդատվություն է ու հոգևոր դաստիարակություն: Իր գրախոսականները նա գրում է էպիկական այնպիսի շնչով, որ քննադատությունը հնչում է որպես ցանկություն, որը դառնում է գնահատման երկխոսության միջոց: Նրա քննադատությունը բարեկամական է ու կառուցողական,

որի շնորհիվ էլ այն մինչ այսօր և այսուհետև մնալու է որպես բացառիկ ժառանգություն հայ քննադատական մտքի պատմության մեջ:

Հոդվածի նպատակն է ներկայացնել Ավետիք Իսահակյանի գրաքննադատական ժառանգության առանձնահատկությունները, արժևորել այդ ժառանգության խորապես մարդկային ու բարոյական դասերը, որոնցով Վարպետը մշտապես կապում էր կյանքը գրականության հետ: Հոդվածի նորույթը Իսահակյանի գրաքննադատական ժառանգության ընդգծումն է հայ գրականագիտության պատմության մեջ և հայ դասականներին և իր ժամանակակիցներին տրված գնահատականների համապարփակ վերլուծությունը: Հոդվածի խնդիրն է ներկայացնել Իսահակյանի տեղը հայ գրաքննադատական մտքի պատմության մեջ և կարևորել այդ դերը գրաքննադատության հետագա զարգացման ընթացքում: Գրաքննադատական և գաղափարական վերլուծական մեթոդի օգնությամբ փորձել ենք վերհանել գրականության և կյանքի կապի իսահակյանական մոտեցումները, որոնք այսօր էլ ապահովում են նրա բացառիկ տեղը հայ գրաքննադատության պատմության մեջ:

SUSANNA ABAZYAN

Brusov State University

abazyan-susanna@rambler.ru

THE LITERARY-CRITICAL HERITAGE OF AVETIK ISAHAKYAN: ARMENIAN CLASSICAL WRITERS AND CONTEMPORARIES

Key words: national, Critique, Article, Contemporaneity, Evaluation, Didacticism, Conviction.

Abstract

Avetik Isahakyan's literary-critical legacy is rich and multi-layered, encompassing analyses of both Armenian and contemporary world literature. In his critical writings, he masterfully intertwines questions of national identity, the Armenian language and literary tradition, patriotism, the ideological influence of world literature, and artistic innovation. Guided by the principle that "a critic is not a judge, but an advisor," Isahakyan

consistently positioned himself as both teacher and companion to writers, emphasizing that literary analysis should assist both author and reader in grasping the deeper meaning, moral value, and educational significance of a work. His criticism also sought to strengthen national self-awareness and define the role of Armenian literature within the broader context of world literature. Isahakyan's critical writings go beyond assessment and analysis: they function as cultural guidance and spiritual education. Written in an epic and dialogical spirit, his reviews transform criticism into a form of appreciative conversation. Constructive and supportive in tone, his criticism stands out as a unique contribution to the history of Armenian literary thought, retaining relevance to this day.

The aim of the article is to present the peculiarities of Avetik Isahakyan's literary critical heritage, to appreciate the deeply human and moral lessons of that heritage, in which the Master always connected life with literature. The novelty of the article is the emphasis on Isahakyan's literary critical heritage in the history of Armenian literary studies and the comprehensive analysis of the assessments given to Armenian classics and his contemporaries. The task of the article is to present Isahakyan's place in the history of Armenian critical thought and to emphasize that role in the further development of literary criticism. With the help of the critical and ideological analytical method, we have tried to reveal Isahakyan's approaches to the connection between literature and life, which even today ensure his exclusive place in the history of Armenian literary criticism.

СУСАННА АБАЗЯН

Государственный университет им. В. Я. Брюсова

abazyan-susanna@rambler.ru

ЛИТЕРАТУРНО-КРИТИЧЕСКОЕ НАСЛЕДИЕ АВЕТИКА ИСААКЯНА: АРМЯНСКИЕ КЛАССИКИ И СОВРЕМЕННОСТИ

Ключевые слова: национальный, критика, научная статья, современность, оценка, дидактизм, убеждённость.

Аннотация

Литературно-критическое наследие Аветика Исаакяна многослойно. Оно включает в себя анализ и оценку ценностей как армянской, так и современной и мировой литературы. В своих критических статьях великий философ удивительным образом сочетал вопросы национальной идентичности, армянского языка и литературы, патриотизма, идеологического влияния мировой литературы и художественного новаторства. Руководствуясь принципом «Критик — не судья, а советчик», Мастер становится учителем и «соратником» писателя во всех своих критических статьях, одновременно уча, что литературный анализ должен помогать и направлять писателя и читателя к глубокому пониманию содержания, нравственной и воспитательной ценности произведения, укреплению национального самосознания и осознанию роли армянской литературы в контексте мировой литературы.

Критическое наследие Исаакяна – это не только оценка и глубокий анализ литературы, но и культурное консультирование и духовное просвещение. Он пишет свои рецензии в таком эпическом духе, что критика звучит как желание, которое становится средством оценочного диалога. Его критика доброжелательна и конструктивна, благодаря чему она и сегодня, и в будущем останется исключительным наследием в истории армянской критической мысли.

Цель статьи – раскрыть особенности литературно-критического наследия Аветика Исаакяна, оценить глубоко человеческие и нравственные уроки этого наследия, с которыми Мастер всегда связывал жизнь и литературу. Новизна статьи заключается в акцентировании литературно-критического наследия Исаакяна в истории армянского литературоведения и всестороннем анализе оценок, данных армянским классикам и его современникам. Задача статьи – представить место Исаакяна в истории армянской критической мысли и подчеркнуть его роль в дальнейшем развитии литературной критики. С помощью критико-идеологического аналитического метода мы попытались раскрыть подходы Исаакяна к связи литературы и жизни, которые и сегодня обеспечивают ему исключительное место в истории армянской литературной критики.

Ներածություն

«Մարդկային հանճարը բնության պես անսպառելի է...«Բայց մարդն է բնության իմաստը, և գեղեցիկ է ճշմարտության թագը, կատարը» (Իսահակյան, 2001: 374):

Վարպետի հավատամքն է սա, որով առաջնորդվել է իր ողջ կյանքում: Նա գրականության պատմության մեջ մտել է ոչ միայն որպես անզուգական քնարերգու, վիպասան, հասարակական գործիչ, այլև քննադատական մտքի անմրցելի գագաթ: Ճշմարիտի աչքերով է դիտել ու ընկալել ցանկացած իրողություն՝ գրական թե պատմական, իրական թե երևակայական: Իսահակյանի գրաքննադատական ժառանգության ընդգրկումը չափազանց լայն է. այն վերաբերում է հայ և համաշխարհային գրականության հիմնական հարցերին ու առնչություններին, արվեստի և գրականության վերափոխիչ ուժին, կարևորում է գրականության ու կյանքի կապը, մարդու ճակատագրի հարցերը, որոնք լավագույնս արտահայտված են նրա բոլոր հոդվածներում ու գրախոսականներում, թռուցիկ անդրադարձներում: Իսահակյանի գրաքննադատական ժառանգությունը ձևավորվել է 19-րդ դարավերջի և 20-րդ դարի առաջին կեսի գաղափարական հոսանքների պայմաններում, երբ հայ ժողովուրդն ու մտավորականությունը կանգնած էին ազգային ինքնության պահպանման, մշակութային անկախության, եվրոպական նոր դրսևորումների յուրացման խնդրի առջև: Մեծ մարդասերն ու անհանգիստ ոգին չէր կարող անմասն մնալ իր ժողովրդին պատուհասած աղետալի իրադարձություններին: Նա անդրադարձել է ժամանակի բոլոր հրատապ հարցերին՝ մեծ տերությունների թողտվությամբ կատարված ողբերգություններին, հայոց ցեղասպանության արձագանքներին հայ և համաշխարհային գրականության մեջ:

Համաշխարհային փիլիսոփայությունն ու կրոնները յուրացրած մեծ մտածողն ու փիլիսոփան ամենայն մանրամասնությամբ անդրադառնում է գրականության ու փիլիսոփայության խնդիրներին: Չափազանց դժվար է այս զարմանալի իմաստուն տաղանդի ողջ վաստակի գնահատականը տալ մի զեկուցման շրջանակում, ուստի, աշխատանքն ավելի ուսանելի ու բովանդակ դարձնելու նպատակով, Իսահակյանի հարուստ ու բազմաբովանդակ գրաքննադատական

ժառանգությունը պայմանականորեն բաժանել ենք թեմատիկ մասերի՝

1. հայ դասական գրականության քննադատություն և արժևորում (Աբովյան, Րաֆֆի, Նալբանդյան, Պատկանյան, Թումանյան, Դեմիրճյան և այլք),

2. իր ժամանակակից գրողների վերլուծություն (Սիամանթո, Վարուժան, Թեքեյան, Չարենց, Բակունց և այլք),

3. անդրադարձ արևելյան և համաշխարհային գրականությանը (Ֆիրդուսի, Նիզամի, Խայամ, Շեքսպիր, Գյոթե, Հայնե, Պրիշվին, Պուշկին, Լերմոնտով, Տոլստոյ, Դոստոևսկի, Գոգոլ, Չեխով, Կոփլով, Գորկի, Շոլոխով, Շևչենկո, Ծերեթելի և դարձյալ շատերը),

4. հայրենասիրական - հասարակական թեմաներ,

5. փիլիսոփայական - գեղագիտական հարցադրումներ:

Քանի որ մեկ հոդվածի շրջանակում հնարավոր չէ անդրադառնալ թեմատիկ բոլոր բաժիններին, ուստի մենք անդրադառնում ենք Վարպետի գրաքննադատական ժառանգության առաջին և երկրորդ կետերին:

Հայ դասական գրականության քննադատություն և գնահատում

Հայտնի ճշմարտություն է, որ Իսահակյանի պոեզիայի լեզուն առավել քան ժողովրդական է, արձակը համեմված է ժողովրդական մտածողությամբ, չքնաղ հայերենով են գրված անկրկնելի «Լիլիթ»-ն ու «Սաադիի վերջին գարունը»: Սակայն բոլորովին այլ է այդ լեզուն, երբ նա անդրադառնում է որևէ գրողի ստեղծագործությանը, կամ էլ որևէ դեպքի, իրադարձության մեկնաբանությանը: Այս միտքն է հաստատում մեծ իսահակյանպաշտ ու իսահակյանագետ Արամ Ինճիկյանը իր «Ավետիք Իսահակյան» մենագրության մեջ. «Յուրաքանչյուր ժանրում իր ստեղծագործական շաղախին տալիս է տվյալ ժանրի բնույթին համապատասխան ձև ու կերպարանք, և դա այնպիսի վարպետությամբ ու հմտությամբ, յուրաքանչյուր ժանրի մեջ տարբեր ու առանձին, այդ ժանրին ու նյութին համապատասխան ոճով ու ոգով, որ ասես դրանք տարբեր հեղինակների գործեր են՝ ստեղծված հավասար վարպետությամբ» (Ինճիկյան, 1977: 13):

Դա լավագույնս երևում է ստորև ներկայացվող հոդվածներում:

«Խաչատուր Աբովյանը և «Վերք Հայաստանի»-ն

Իսահակյանը անհուն երկյուղածությամբ է մոտեցել մեծ լուսավորչի կերպարին ու գրական վաստակին, նրա թողած՝ սերունդներ կրթող վիթխարի ժառանգությանը: «Խաչատուր Աբովյանը և «Վերք Հայաստանի»-ն» հոդվածը գրվել է 1940-ին Երևանում և ընթերցվել «Վերք Հայաստանի» վեպի 100-ամյակին նվիրված հանդեսում: Տպագրվել է «Գրական թերթ»-ի 1940-ի մարտի 1-ի համարում, այնուհետև՝ Իսահակյանի տարբեր տարիներին հրատարակված «Ընտիր երկեր»-ում, «Երկերի ժողովածու»-ներում, 2020-ին հրատարակված «Երևան, ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, Երկերի լիակատար ժողովածու 14 հատորով, հատոր 11»-ում:

Արվեստաբան Լևոն Հախվերդյանի վկայությամբ՝ Վարպետը «Քայլ առ քայլ է պատրաստվել Աբովյանի «Վերքի» ընկալմանը» (Հախվերդյան, 1974: 15): «Վարպետի թելադրանքով և հսկողությամբ 1908-ին Բաքվում հրատարակվում են իր մեծ ուսուցչի՝ Հովհաննես Հովհաննիսյանի բանաստեղծությունների հատորը և իր պաշտելի Աբովյանի «Վերք Հայաստանի» (Հախվերդյան, 1974: 68):

Հետագայում հենց այս ընկալմամբ է Վարպետը տվել «Վերք Հայաստանի» կախարդական վեպի բացառիկ գնահատականը:

Հոդվածն սկսվում է «Վերք»-ի թողած առասպելական տպավորությամբ, գիրքը ձեռք բերելու հուզիչ պատմությամբ: Այնուհետև մեծ մտածողը ոսկերչական նրբությամբ տալիս է այս հրաշքի անգերազանցելի գնահատականը: Հոդվածի յուրաքանչյուր միտք առանձին ասույթի արժեք է ստանում, և մեր առջև պատկերանում է այդ «հրեղեն երևույթ»՝ իսահակյանական կրթողային վերլուծությունը՝ ամենայն մանրամասնությամբ: Այնքան խորությամբ է տրված գրքի գաղափարը, հայրենասիրության անշիջանելի կրակը, «մանր, ենթակա ազգերի զարթոնքի և ազատագրությունների դարաշրջանը» (Իսահակյան, 2020: 348), որ ընթերցողը պարզապես վառվում է այդ «անմատույց գիրքը» (Վարպետի բնութագրումն է) ընթերցելու անհագուրդ ցանկությամբ, ինչպես ժամանակին Վարպետն ու իր ընկերները, ողջ առաջադեմ գրական աշխարհը:

Հերքելով Պերճ Պողոսյանի՝ «Աբովյանի՝ իր ժամանակից կանուխ ծնված լինելու մասին» միտքը (Իսահակյան, 2020 347)՝ Իսահակյանը հաստատում է Աբովյանի՝ ճիշտ և ճիշտ ժամանակին ծնված լինելու անհրաժեշտությունը: Որովհետև՝ «Մեկը պիտի ծագեր հայ ժողովրդի հոգուց՝ մի առաքյալ, մի մարգարե, մի մեծ բանաստեղծ, որ ժողովրդին բերեր վերածնունդի իմաստուն պատգամներ, հրեղեն խոսքերով խանդավառեր նրա սիրտը, ամրացներ նրա կամքը անձնազուհի հայրենասիրությամբ... » (Իսահակյան, 2020: 348): Վաղուց դասագրքային ճշմարտություններ են այս հոգվածի բոլոր բնութագրությունները:

Տալով Աբովյանի՝ որպես անգուգական հանճարի ծննդյան անխուսափելիությունը՝ Իսահակյանը նաև տալիս է այդ հրաշք վեպի լիարժեք վերլուծությունը, նրա թողած անջնջելի տպավորությունը, անբեկանելի պատգամները. «Մենք երբեք չզգացինք վերք ու ողբ, մենք չտխրեցինք, չընկճվեցինք հայկական վշտով ու վերքով, այլ լցվեցինք վրիժառությամբ, գերազանցապես վառվեցինք հայրենասիրությամբ, արիությամբ, հերոսությամբ, մենք թևավորվեցինք ապագայի շքեղ տեսիլներով», «Աբովյանը խտացումը եղավ հայ ժողովրդի երազանքների, ձգտումների, ցավերի ու տառապանքների, նրա հոգու և իմաստության, նա եղավ հայ ժողովրդի լեզուն, սրտագին լեզուն» (Իսահակյան, 2020, հ. 11, 349):

Ավելի տարողունակ ու սպառիչ գնահատական չկա հայ գրաքննադատության պատմության մեջ: Տալով գրքի բովանդակային վերլուծությունն ընդամենը մի քանի տողով՝ նա ընթերցողին ներկայացնում է անձեռակերտ քանդակ՝ իմաստավորելով «Վերք»-ի տեղն ու անկշռելիությունը հայ ժողովրդի գրականության ու պատմության մեջ: ««Վերք Հայաստանի»-ն դա գիրք չէ, դա հոգուց պողոթեմ, սրտի խորքերից շղթայազերծված մրրկարշավ է, հրաբուխ: Զարմանալի, անհունորեն զարմանալի հրաշք երևույթ է «Վերք Հայաստանի»-ն: Իսկ Խաչատուր Աբովյանը մեր նոր միֆն է, մեր նոր Միերն է նա՝ ազատագրված, շղթայազերծ» (Իսահակյան, 2020, հ. 11, 351): Այսքան հանճարեղ բնութագիր, և՛ « Ես չեմ կարող ասել, թե ի՞նչ է

«Վերք Հայաստանի»-ն» (Իսահակյան, 2020, հ 11: 350): Իմաստունի ինչպիսի՜ համեստություն:

Հետագայում Վարպետը քանիցս անդրադարձել է անմահ քանաքեռցու կերպարին («Խաչատուր Աբովյան», 1948, «Խոհ Աբովյանի արձանի մոտ», 1955): Սրանք հանրագիտարանային արժեք ունեցող հրաշալի հոդվածներ են, որոնց, ցավոք, չենք կարող անդրադառնալ մեկ զեկուցման շրջանակում:

Դ. Դեմիրճյանի «Վարդանանքը»

Ընթերցող լայն հասարակությունը քաջատեղյակ է հայ գրականության երկու մեծերի անխախտ բարեկամությանն ու անխարդախ սիրուն: Դեռևս «Վերնատան»-ն անդամագրվելուց առաջ նրանք գիտեին իրար, կարդացել էին մամուլում տպագրված առաջին բանաստեղծությունները, համակրում էին միմյանց: Բայց նրանց անխախտ ուխտի սկիզբը դրվեց «Վերնատան» անմոռանալի երեկոներին: 1945-ին գրած «Դերենիկ Դեմիրճյան» հոդվածում Իսահակյանը իրենց կեսդարյա մտերմությունը ներկայացնում է որպես իր «Վաղեմի սիրելի ընկերոջ գրական ծանր, բայց փառավոր ուղի՝ մեր գրականության մեջ իր վաստակած ինքնուրույն և անփոխարինելի տեղով» (Իսահակյան, 2020: 406): Հոդվածը գրվել է Դեմիրճյանի գրական գործունեության 50-ամյա հոբելյանի առթիվ և նրա բազմաժանր գրականության հրաշալի գնահատականն է: Նախանձելի սիրով ու ոգևորությամբ է Իսահակյանն անդրադառնում Դեմիրճյանի՝ 1944-ին լույս տեսած «Վարդանանք» պատմավեպի 1-ին հատորի թողած տպավորությանը, զարմանալի հայրենասիրությանը, հրաշալի լեզվին: Վարպետը, նրբությամբ նշելով «Վարդանանք»-ի թե՛ լեզվական, թե՛ ոճական և թե՛ հապճեպության ու անավարտության հետևանքով նկատված թերությունները, որոնք, անկասկած, պիտի շտկվեն 2-րդ հատորում, անցնում է այս հրաշալի պատմավեպի աննախընթաց հաջողությանն ու հիացական արձագանքներին: Հոդվածն առաջին անգամ լույս է տեսել «Սովետական Հայաստան» օրաթերթում, այնուհետև՝ Իսահակյանի՝ տարբեր տարիներին տպագրված երկերում (Իսահակյան, 2020: 660): Նա հիացմունքով է խոսում «հայրենի պեյզաժի գեղեցկության, գողթան գուսաներգերի, իմաստուն մտքերի ու

խորհրդածությունների տարափի, մասսայական, հոգեբանական տեսարանների» և այլ արժանիքների մասին:

Վարպետը հզոր շնչով է ներկայացնում այս վեպի թողած տպավորությունը. «Վեպը վառվում է ռազմական կրակով, յուրաքանչյուր էջից կարծես վրնջում են նժույգները: Կորովի երիտասարդները պատրաստ են կռվել և զոհվել հայրենիքի համար» (Իսահակյան, 2020: 382): Հոգվածի վերջում Իսահակյանը տալիս է պատմավեպի սպառիչ գնահատականը, որը մինչ այսօր անմրցելի է, ինչպես անմրցելի ու սպառիչ են նրա տված բոլոր գնահատականները: «Այս արժեքավոր վեպը՝ տոգորված ազգային արժանապատվության բարձր գիտակցությամբ, իր հուզականությամբ ապրեցնում է մեզ, ցնցում է, թափահարում է մեզ: Կրթիչ, դաստիարակիչ վեպ է, բարձրացնող, ոգի կազդուրող» (Իսահակյան, 2020: 384): Ի դեպ, առաջացած տարիքով վիպասանը մանկան նման հուզվում է, կարկամում երախտագիտությունից, երբ կարդում է անդավաճան ընկերոջ հրաշալի հոդվածը: Այս մասին վկայում է արվեստաբան Ռուբեն Զարյանը իր «Ավետիք Իսահակյան» (Զարյան, 1974: 58) գրքույկում. «Աչքերը վառվում էին երիտասարդական կրակով: Շրթունքները շարժվեցին, որ մի բան ասեն, բայց չկարողացան»:

Հիրավի, «կրթիչ, դաստիարակիչ վեպ», որ այսօր էլ հուզում ու խանդավառում է այնպես, ինչպես այն հեռավոր՝ Հայրենականի տարիներին: Եվ ինչպես Վարպետն է եզրափակում՝ «Նա պիտի խանդավառի մեր մարտիկներին՝ օրինակ առնելու մեր հերոսական նախնիներից» (Իսահակյան, 2020: 384), այնպես էլ մենք ենք համոզված, որ այս անզուգական պատմավեպի հմայքը երբեք չի խամրելու և դեռ պետք է խիզախություն ու կամք տա այսօրվա զինվոր-մարտիկին: Քանի որ «Վարդանանց պատերազմը - դա պատերազմ էր ազգային գոյության պահպանման համար, հայրենիքի ազատության համար՝ ընդդեմ բռնության, ծովման, այլասերման» (Իսահակյան, 2020: 383): Այս հայրենաշունչ վեպը ապրելու է՝ ապրեցնելով հավերժի ճամփորդ հայ ժողովրդին, իսկ Վարպետի համապարփակ ու անաչառ գնահատականը միշտ մնալու է մեր գրաքննադատության լավագույն էջերից մեկը:

Հովհաննես Թումանյան

Մյուս մեծ դասականը, ում անհուն սիրով ու տաք կարոտով բազմիցս անդրադարձել է մեծ գեղագետ–փիլիսոփան, «մեր նորագույն գրականության անմահ փառքը՝ Հովհաննես Թումանյանն է (Իսահակյան, 2020, 274):

Մեծ լոռեցուն և իր ստեղծագործությանը նվիրված վեց հոդված ունի Իսահակյանը՝ գրված տարբեր առիթներով և տարբեր տարիներին: Ներկայացնելով Թումանյան մարդուն, անզուգական ընկերոջը, անաչառ քննադատին, սիրող հորն ու ամուսնուն՝ Իսահակյանը մեծ խորությամբ քննում է մեծագույն հանճարի թողած հսկայական ժառանգությունը, անդրադառնում նրա անուրանալի տեղին ու դերին հայ և համաշխարհային գրականության մեջ: Այնքան է գնահատում իր ավագ գրծընկերոջը, որ անգամ ցանկություն է հայտնում. «Ես Հովհաննեսի աշխարհգագցումով եմ ուզում մեռնել՝ իջնել իմ սարիս ետևը» (Իսահակյան, 2020: 456): Խորիմաստ մտածողը մի քանի նախադասությամբ տալիս է իր պաշտելի Օհաննեսի ամբողջական բնութագիրը. «Թումանյանը՝ իբրև տարերային, խոլական բանաստեղծ, չէր կարող սեղմվել ոչ մի դոգմայի մեջ: Նա էությամբ հայկական էր, հայրենասիրական: Միշտ էլ նա եղավ հայ տառապանքի հետ, հայրենիքի հետ, եղավ այն հայը, որ ոգևորվում էր խնկաբույր Նարեկով՝ միշտ վերածնության, ազատության հույսը հոգու մեջ: Նա ինքը կենդանի վիպասանություն էր, ոճով մարդ, կենցաղը, զրույցը ոճ էր» (Իսահակյան, 2020: 351, 2020: 456): 1923-ին հեռավոր Վենետիկում Վարպետն ստանում է ամենայն հայոց բանաստեղծի մահվան բոթը: «Հովհաննես Թումանյան» (Համբույրով ու կարոտով նրա անմահ հիշատակին)՝ հոդվածը պարզապես բնութագիր հիացում է, Թումանյանի անձի ու ստեղծագործության հրաշալի վերլուծություն, «այլացել Կովկասն ու հայը ամբողջ իր բյուրեղ ձևերով կաղապարված էր նրա մեջ...» (Իսահակյան, 2020: 209): Հոդվածը ոչ միայն անամոք վշտի ցավագին արձագանք է, այլև հանճարեղ լոռեցու արվեստի հրաշալի գնահատական: Միայն իրեն հատուկ խորաթափանցությամբ՝ նա ձևակերպում է Թումանյանի արվեստի տեղը մեր գրականության մեջ. «Հեղեղի պես իջավ նա առասպելական Լոռու վայրենի լեռներից՝ բերելով իր հետ մի ամբողջ բնություն՝ հուռթի ու բազմատարր,

մի ամբողջ հինավուրց ժողովուրդ՝ իր տոհմիկ երգով ու խոսքով, հույզերով ու երևակայությամբ: Եվ ինչպես ստեղծող մեծ բնությունը, փոեց նա մեր հոգու առջև իսկական, անկեղծ բանաստեղծությունը: ...մեր թոհչքը Թումանյանի արվեստի գոհարակերտ բարձունքից այն կողմ չի անցել» (Իսահակյան, 2020: 208): Ահա այսպիսի անմրցելի, անաչառ գնահատականներով է հագեցած նրա հիացումը: Հոգվածը խորունկ, անդարմանելի ցավի մի սքանչելի արահայտություն է, «ցավ, որ անուն չունի, անհուն կսկիծ, անհուն մորմոք, անհուն հուսահատություն» (Իսահակյան, 2020: 210): Իսահակյանի տված բնութագրություններն ունեն ասույթների արժեք, դրանք դրվել են դպրոցական դասագրքերում, դարձել են մեծ հանճարի ստեղծագործության բանալիները: 1910-ին Իսահակյանն անդրադառնում է Թումանյանի արձակի մարգարիտին՝ «Գիքորը» «սիրուն պատմվածքին»: 1,5 էջանոց հոգվածը մի անմրցելի խորունկ վերլուծություն է, որտեղ երևում են Վարպետի անուրանալի նուրբ դիտողունակությունը, իրերի ներսը տեսնելու բացառիկ տաղանդը: Այս վերլուծությունը ընթերցողի առջև բացում է թումանյանական աշխարհի ողջ շքեղությունը, «թե ինչպես այս նախվ պատմվածքը թաքցնում է իր մեջ այնքան լիրիզմ, այնքան անմիջական զգացմունք և այնքան իրական կյանք... և տեսնում ենք, որ այդ տողերի վրայով անցել է իսկական տաղանդի տիրական ձեռքը» (Իսահակյան, 2020: 188): Նա Թումանյանի լեզուն համեմատում է լեռնային «վճիտ վտակի հետ, որի հատակում շողշողում են նախշուն ավազահատիկները» և «Գիքորը» համարում է «անմրցելի գործ, մաքուր գոհար» (Իսահակյան, 2020: 478): Հայ գրաքննադատության մեջ անհնար է գտնել նման խտացում պարունակող մի այլ բնութագրում: 1931-ին Փարիզում ներկայացվել է «Անուշ» օպերան, որի առիթով Վարպետը դարձյալ անդրադարձել է մեծ լոռեցուն, և թվում է՝ հոգվածը պետք է անդրադառնար օպերային, բայց նորից է տրվում Թումանյանի գործի հերթական գնահատականը, խորին ցավն ու ափսոսանքը նրա մահվան կապակցությամբ. «Որովհետև այնքա՛ն անըմբռնելի, այնքա՛ն անհամատեղելի էր նրա հեքիաթական էությունն ու երևույթը ներկա իրականության մեջ» (Իսահակյան, 2020: 234): Այնուհետև, անդրադառնալով օպերային,

փաստում է, որ այն Թումանյանի «շատ սիրած լիրիկո-հովվերգական պոեման է» և գաղութահայության համար այդ օպերայի դիտումը մանկության վերապրում է, հայրենիքի կարոտի զգացում ու հայ սրտաբուխ երգի ունկնդրում:

1948-ին Վարպետը կրկին անդրադառնում է ամենայն հայոց բանաստեղծին: Նրա անպարփակ հոգին այնքան է լցված Թումանյանով ու նրա թողած գոհարներով, որ հմուտ սերմնացանի նման ամեն պահ շաղ է տալիս իր խոհերն ու մտորումները, հիշում և արժևորում այն անկրկնելի, անմոռաց ժամանակները, երբ եղել են միասին, Թումանյանի հետ: «Հովհաննես Թումանյան» հոդվածը ոչ միայն հուշագրություն է, որն սկսվում է երկու մեծերի ծանոթությամբ 1892-ին ու շարունակվում մինչև վերջ, անգամ Թումանյանի վախճանից հետո (քանզի Վարպետը երբեք չապրեց առանց իր Օհաննեսի), այլև անգնահատելի տեղեկագիր է Վերնատան ստեղծման, նրա ստեղծագործական պատմության, գրական վեճերի ու ասուլիսների. «Անմոռանալի գեղեցիկ ժամեր ենք անցրել «Վերնատանը», իմաստավորված, բովանդակալից, ներշնչող պահեր» (Իսահակյան, 2020: 98): Հոդվածը գրված է տարեգրության ձևով, որտեղ անհուն սիրով, ընկերոջ անխարդախ հիացմունքով տալիս է Թումանյան մարդու, մեծ բնապաշտի, խորաթափանց մտածողի լուսավոր կերպարը, ափսոսում, որ այս կենսասեր հանճարը, որը բոլորին հարբեցնում էր իր կախարդիչ խոսքով, հումորով, մտքի, խոսքի հմայիչ գյուտերով, անժամանակ հեռացավ՝ իր հետ տանելով «անհամար գանձեր»: Կարդալով Վարպետի՝ Թումանյանին նվիրված հոդվածները, լցվում ես անբացատրելի թախիծով և կրկին համոզվում, որ Վարպետի ասելիքն անվերջ է, անձայր, որ նա ամեն վայրկյան իր Օհաննեսի հետ է, նրա հյուրընկալ «Վերնատանը», նրա կախարդական ծննդավայրում: Թումանյանի կենսագիրներից և ոչ մեկը այդքան հրաշալի չի ներկայացրել նրան, որքան իր նույնքան տաղանդավոր ու նույնքան կենսասեր ընկերը: Վարպետի բոլոր գնահատականները տրված են գերագույն ճշգրտությամբ՝ շաղախված հիացական սիրով ու ջերմությամբ: «Օհաննեսը մի լուսավոր աստղ էր՝ հայության հանճարին դարերով պատիվ բերող, և սիրելի էր շա՛տ, և նրա թողած տեղը միշտ բաց

կմնա, միշտ պետք է մորմոքեն մեր սրտերը» (Իսահակյան, 2020: 454):

Մեկ հոգվածի շրջանակում անհնար է անդրադառնալ բոլոր գրախոսություններին, ուստի, Վարպետի գրաքննադատական միտքը ամբողջացնելու նպատակով անդրադարձ ենք կատարում նաև իր ժամանակակից գրողների գնահատականներին:

Ժամանակակից գրողների վերլուծություն

Հայ գրականության զարգացման ընթացքը չէր կարող անտարբեր թողնել այնպիսի տաղանդաշատ ու անհանգիստ գրողի, ինչպիսին Իսահակյանն էր: Հարկադրված վտարանդիության մեջ անգամ նա ուշիուշով հետևում էր հայ գրականության ընթացքին ու արձագանքում յուրաքանչյուր նոր գրողի ծնունդին, քաջալերում տաղանդներին և անխնա քննադատության արժանացնում նրանց, ովքեր գուրկ էին անգամ ամենասովորական օժտվածությունից: 50-ական թվականներին Վարպետը գրել է. «Գիտեմ՝ մի օր էլ իմ կյանքն ու պոեզիան են «քամուն տալու»՝ հարդն ու ցորենը ջոկելու համար... երկուսը միասին ընկալելն է դժվար: Հենց այդ դժվարով էլ պարտավոր է զբաղվել քննադատությունը... Աչառու քննադատությունը տաղանդ սպանել չի կարող, բայց անսանձ գովքը կարող է» (Իսահակյան, 2001: 416): Այս սկզբունքով է առաջնորդվել իր ամբողջ կյանքում անաչառ գրաքննադատը:

Բոլորին հայտնի է երկու մեծերի՝ Իսահակյանի և Չարենցի անսահման հուզիչ մտերմությունը, նրանց հիացումը միմյանց բանաստեղծական և մարդկային տաղանդով, Չարենցի հավատը Վարպետի նկատմամբ, նրա հիացումը՝ անկրկնելի բանաստեղծությամբ, Վարպետի հայրական գուրգուրանքը հանճարի ընտանիքի նկատմամբ: Նրանք գիտեին միմյանց միայն հեռվից. առաջին հանդիպումը կայացել է 1924-ին, Վենետիկում՝ դառնալով անխախտելի մտերմության սկիզբ: Այս մասին Վարպետը պատմում է 1957-ին՝ մահվանից մի քանի շաբաթ առաջ գրած «Չարենցի հետ Վենետիկում» հոդվածում: Բնութագրելով Չարենցին՝ որպես մարդու. «Չարենցը խոհուն, զարգացած, մեծ էրուդիցիայի տեր անձնավորություն էր, անհանգիստ բնավորություն, ըմբոստ և եռուն...» (Իսահակյան, 2020: 140), նկատի

ունենալով Չարենցի անսանձ տաղանդը, նրա ըմբոստ ու անկանխատեսելի էությունը, նրա խոտորումները, Իսահակյանը տալիս է նրա ստեղծագործական ճանապարհի զարմանալի ճշգրիտ գնահատականը. «Քո հուրը քեզ կայրի, բայց կվառի ճանապարհներ»: Ինչքա՞ն իմաստուն էր Վարպետը: Իրոք, Չարենցը ստեղծեց դպրոց: Իսահակյանի քննադատական ժառանգության մեջ չկա Չարենցին նվիրված վերլուծություն, նրան բնութագրող մտքերը շարադրված են տարբեր զրույցներում, հպանցիկ վերլուծություններում, որոնք տեղ են գտել Լևոն Հախվերդյանի, Ռուբեն Զարյանի՝ Վարպետին նվիրված գրքերում: Ռուբեն Զարյանի հուշերում կարդում ենք. «Կարդացի Չարենցը սկզբից մինչև վերջ: Կարծիքս ընդհանրապես չեմ ասում: Վախենում եմ՝ ճիշտ չհասկանան և սխալ բացատրություններ տան: Եղիշեն արժանի է ոգևորության, նույնիսկ կրկնակի չափով, և՛ որպես բանաստեղծ, և՛ մանավանդ իր դժբախտ ճակատագրով: Գլուխգործոցներ շատ ունի, որոնք հայ գրականության ամենափառահեղ էջերի կողքին կարող են դասվել: Թույլ գործերը շատ են, երկարախոս է, հաճախ կրկնվող, չմշակված» (Զարյան, 1974: 83): Գրաքննադատությանը վաղուց հայտնի է Վարպետի անպարագիծ հիացմունքը «Ես իմ անուշ Հայաստանի» անմրցելի տաղով. «Ինձ համար, առանց չափազանցության, բոլորովին օբյեկտիվ կերպով կասեմ, որ հայ տառերով, հայ բառերով այդպիսի բանաստեղծություն չի գրված՝ հայրենասիրության տեսակետից: Դա եզակի, աննախընթաց բան է: Նույնիսկ կարելի է ասել, որ եվրոպական համաշխարհային գրականության հայրենասիրական ժանրի բանաստեղծություններ, այդպիսի թափով, այդպիսի ընդարձակ խորքով գրված բան՝ գոնե ես չեմ հիշում»: (Հախվերդյան, 1974: 148): Եվ սա՝ «Էլեգիա, գրված Վենետիկում» (Վարպետն այս գործի մասին ասել է. «Ամբողջ հին մտայնությունը իմ վրա է կուտակել: Բայց և այնպես տաղանդավոր տեղեր շատ կան» (Հախվերդյան, 1974: 151), այս գործում Չարենցը հանիրավի քննադատություն է հնչեցնում Վարպետի հասցեին, բոլորովին անհարիր իրենց հրաշալի մտերմությանը այդ քաղաքում: Հետագայում Չարենցը, իհարկե, քավեց իր մեղքը՝ գրելով Իսահակյանին և իր ստեղծագործությունը բնորոշող սքանչելիքը՝ հանրահայտ նամակ - բանաստեղծությունը՝

«Ծնրադիր հիացմունք արվեստակցի ստեղծագործությամբ», որը, բանաստեղծի որդու՝ Վիգեն Իսահակյանի վկայությամբ, Վարպետը պահել է խորագույն ակնածանքով. «Հայրս, որպեսզի ոչ ոքի վնաս չպատճառեր, Չարենցի նամակ - թաշկինակը բոլորից գաղտնի էր պահել: Պահել էր իր ամենաթանկագին ձեռագրերի հետ» (Իսահակյան Վ., 2000: 588): Ահա այսպիսի անվերապահ հիացում երկու մեծերի: Անսահման սիրելով Չարենցին ու իր ստեղծագործությունը՝ Իսահակյանը դժգոհել է Չարենցի «ինքնասիրահարվածությունից».

«Մի տեղ իրեն հսկա պոետ է անվանում, մի տեղ՝ չգիտես ինչ. մարդ էլ ինքն իրեն հանճար անվանի: Չե՛մ սիրում, չե՛մ հասկանում, չե՛մ ընդունում»: Ահա Վարպետի անաչառության ու ազնիվ տազնապի մի հրաշալի օրինակ, որը գրի է առել Ռուբեն Ջառյանը իր «Ավետիք Իսահակյան» գրքում: Անվերապահորեն ընդունելով իր «սիրելի Եղիշին»՝ նա չի վարանում իր ճշմարիտ կարծիքը հայտնելու: Նա միշտ հավատարիմ է մնացել սեփական նկարագրին, սեփական մարդկային էությանը: Այստեղ թերևս տեղին է հիշել Գյոթեին. «մեծերը համարձակություն ունեն լինելու այնպիսին, ինչպիսին իրենց ստեղծել է բնությունը»: Իսահակյանը չափազանց բարձր է գնահատել Չարենցի ստեղծագործությունը. «Նա ինչ որ տվեց, դա մի անմահ կոթող է հայ գրականության մեջ (Իսահակյան, 2020: 140):

Իսահակյանի մյուս հիացմունքը հայ արձակի անզուգական վարպետն է՝ Ակսել Բակունցը, ում ստեղծագործությունը խորապես հուզել ու հիացրել է բնապաշտ Իսահակյանին: Շատ չի անդրադարձել Վարպետը Բակունցի ստեղծագործությանը, բայց այն, ինչ գրել է Բակունցի մասին ամենաճշմարիտ ու հրաշալի բնորոշումն է: 1934-ին Փարիզում գրում է մի հոդված՝ նվիրված Ակսել Բակունցի «Սև ցեղերի սերմնացանք» գրքին, որտեղ հրաշալիորեն տրված է «հայ գրականության մեծ Պանի» հիացական գնահատականը. «Բակունցը մեր արձակի ամենատաղանդավոր ներկայացուցիչն է: Ձեղուն, խտրուն կիրիզմով տոգորված են նրա պատմվածքները, առանց ոտքի տակից կորցնելու իրականությունը: Եվ նրանց վրա ծփում է բնության մեծ Պանի հզոր շունչը» (Իսահակյան, 2020: 140): Բակունցի նկատմամբ Վարպետն ունի անվերապահ հիացում, նրա ասույթները տեղ են

գտել դպրոցական դասագրքերում, դարձել են բացառիկ ճշմարտություններ:

Հրաշալի է բնութագրել Վարպետի լեզուն Արամ Ինճիկյանը իր «Իսահակյանի արվեստի մի քանի առանձնահատկությունները» հոդվածում. «Նա հայ լեզվին տիրում է այնպես, ինչպես անապատի բեղվինը՝ նետ - աղեղին» (Ինճիկյան, 1977: 8): Այս դիպուկ բնորոշումը լիովին հաստատում է Վարպետի՝ 1939-ին գրախոսած բազմաթիվ դրամաների մերժումները (Վարպետն այդ տարին մրցանակաբաշխության հանրապետական հանձնաժողովի անդամ էր): Այդ դրամաները բոլորովին անհայտ էջեր են, դրանք չեն տպագրվել, մինչ այսօր մնում են զանազան արխիվներում: 2020-ին հրատարակված Ավետիք Իսահակյանի Երկերի լիակատար ժողովածուում առաջին անգամ տպագրվել են այդ գործերի վերաբերյալ Իսահակյանի կարծիք-գրախոսությունները, որոնք գրելիս Վարպետն առաջնորդվել է իր իսկ որդեգրած սկզբունքով՝ «Քննադատությունը ուղղորդող խոսք է, ոչ թե դատավճիռ», այն պիտի օգնի տեսնելու այն, ինչ չի նկատել գրողը, չի կարելի անհիմն նրան մատնել խարանի: Եվ նա իր «լեզվի նետ-աղեղով» այնպես դիպուկ է «նետահարել», որ մերժված հեղինակները այլևս մոռացել են գրականության ճանապարհը: Ժամանակի մտայնությունը (անհատի պաշտամունք, կոլեկտիվացում, վնասարարություն, զրպարտություն, ժողովրդի թշնամի և այլն) գրական հրապարակ է հանել մարդկանց, որոնք մղոններով հեռու են գրողի կոչումից, օժտվածությունից, որոնք ըստ ամենայնի առաջնորդվել են հանճարի՝ հեգնանքով ասված մտքով. «Հարկավոր է, որ ամեն աղախին Սովորի պետություն դարձնել» (Չարենց, 1986: 132): 1939-ի «առատ հունձքը» դատապարտվել է գրականության աղբանոցը նետվելու՝ շնորհիվ Վարպետի խիստ գնահատականների: Ստեղծագործությունները ներկայացված են առանց հեղինակների անունների, ուստի Վարպետն առավել քան արդար էր իր անողոք գնահատականներում՝ առաջնորդվելով միայն «հանուն գրականության ու արվեստի կարգախոսով»: Մրցանակաբաշխության ներկայացված 20 դրամաներ ու պիեսների գրախոսություններ են զետեղված 11-րդ հատորում, որոնք

ունեն հետևյալ գնահատականները⁵: «Իժը» (դրամա 5 գործողությամբ) մանրամասն վերլուծելով, մատնանշելով շինծու հանգույցները, լուծումները, լեզվական սխալները՝ անաչառ ու ուղղամիտ գրախոսը արձակում է իր անբեկանելի վճիռը. «Ուղղելով, եթե հնարավոր է, իր ծուռ հայելին, որ ճշգրիտ կարողանա ցուացնել կյանքը, կարելի է խորհուրդ տալ գավառային բեմերի համար: Ժյուրիի քննության հանձնարարելի չէ» (Իսահակյան, 2020: 306): Միանգամայն արդար վճիռ՝ առանց հեգնանքի ու վիրավորանքի, քանի որ բովանդակությունից ու շարադրանքի լեզվից երևում է հեղինակի գրական ճաշակը, կրթվածությունը: Նույն ճակատագրին են արժանանում Ալաբլիի «Քյոռոլի» պատմական դրաման, որը բնավ պատմական բնույթ չունի, ուստի դարձյալ «Այս պատմական դրաման ոչ մի տեսակետից չի կարելի ներկայացնել մրցանակաբաշխության» (Իսահակյան, 2020: 316), «Վերածնունդ»՝ «ծայրեծայր անհեթեթություն» (Իսահակյան, 2020: 317), Ս. Միքայելյան «Հերոսի հետքերով կամ առաջին ունևորը». «Սուռ դրույթի վրա է հիմնել նեղինակը իր գործը: Չեմ գտնում հանձնարարելի» (Իսահակյան, 2020: 314): Վարդ - «Ստալինյան ցեղ»՝ «Մրցանակաբաշխության հանձնարարելի չեմ գտնում. ինչ-ինչ փոփոխություններով ու թերությունների վերացումով հանդուրժելի կլինի գյուղական բեմերի վրա»: Արարատ-«Ղուկաս Ղուկասյան» (Պիես 5 գործողությամբ). «Գրականությունից դուրս մի բան է սա: Միանգամայն խոտան» (Իսահակյան, 2020: 324): Եվ այսպես շարունակ:

Հոգվածն ավելորդ չձանրաբեռնելու նպատակով չենք անդրադառնում նմանատիպ գործերի քննությանը: Վարպետի բեղմնավոր գրիչը չի սայթաքել որևէ գործ քննելիս կամ վերլուծելիս, նրա անխարդախ ուղղամտությունն ու արվեստի բարձր գիտակցությամբ արված բոլոր գնահատականներն այսօր էլ արդիական են և ուսանելի. Այս անաչառ գնահատականներն սթափեցրել են հետագա շատ գրողների ու քննադատների՝ փրկելով մեր գրականությունը անարվեստ ու անբովանդակ, գրական ճաշակից զուրկ բազում գործերից:

⁵ Դրանց թվում է Բրաբիոն ծածկանով ներկայացած Դ. Դեմիրճյանի «Երկիր հայրենի»-ն, որն առաջին մրցանակ է շահել:

Ուստի յուրաքանչյուր ոք, ով երկյուղածությամբ կմոտենա խորագիտակ գրաքննադատի ժառանգությանը, «առատորեն կվարձատրվի»:

Եզրակացություն

Ուսումնասիրելով մեծ փիլիսոփայի, անաչառ քննադատի ժառանգության մի փոքր մասը միայն՝ համոզվում ենք, որ այդ ժառանգությունը հայ գրականագիտության լուսավոր էջերից է: Այն գրված է նույն պաթոսով ու հոգով, նույն անզուգական լեզվով, ինչպես գրված են նրա շքեղ պոեզիան ու առինքնող արձակը, նույն խոհափիլիսոփայությամբ, ինչպես «Ուստա Կարոն»՝ մեծ մտածողի միշտ շարունակվող երազը: Նրա գրախոսությունները երկխոսություններ են գրողի և ընթերցողի միջև, ուսուցողական զրույցներ, խորհրդածություններ: Իսահակյանի գրաքննադատության մեջ իշխում են բարին ու գեղեցիկը, ճշմարիտն ու մարդկայինը:

Այսպիսին է գրաքննադատ Իսահակյանը, ում քննադատական ժառանգությունը մեզ սովորեցնում է, որ գրականությունը ոչ միայն գեղարվեստական արվեստ է, այլև կյանքի ու պատմության խոր իմաստների բացահայտում: Մեծ մարդասերը համոզված էր, որ քննադատությունը պետք է լուսավորի նորի ճանապարհը, պետք է ուսուցանի և դաստիարակի մարդուն, պետք է ծառայի ազգին ու ժողովրդին, օգնի յուրաքանչյուրին: Մենք պետք է որդեգրենք մեծ Վարպետի թողած դասերը, պետք է ապրենք, ինչպես ապրեց ու գործեց նա՝ հետնորդներիս ավանդելով. «Սիրելով չափեցեք, թող այս լինի ձեր միակ չափը՝ ամեն բան չափելիս» Իսահակյան, 2001: 447):

Այս սիրով էլ մենք մոտեցել ենք Վարպետի գրաքննադատական ժառանգության մի փոքր մասին միայն՝ ավելի խոր ու մանրակրկիտ վերլուծությունը թողնելով հետագային:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Զարյան Ռ.**, Ավետիք Իսահակյան, Երևան, «Հայաստան» հրատ., 1974, 125 էջ:
2. **Թամրազյան Հ.**, Բանաստեղծը և ճակատագիրը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1978, 388 էջ:

3. **Ինճիկյան Ա.**, Ավետիք Իսահակյան, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1977, 258 էջ:
4. **Իսահակյան Ավ.**, Երկերի լիակատար ժողովածու 14 հատորով, հատոր 11, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2020, 809 էջ:
5. **Իսահակյան Ավ.**, Երկերի ժողովածու 6 հատորով, հատոր 5, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1977, 434 էջ:
6. **Իսահակյան Ավ.**, Աֆորիզմներ, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2001, 496 էջ:
7. **Իսահակյան Վ.**, Հայրս, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, 589 էջ:
8. **Հախվերդյան Լ.**, Իսահակյանի կյանքն ու գործը, Երևան, «Հայաստան» հրատ., 1974, 219 էջ:
9. **Չառենց Եղ.**, Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 2, Երևան, «Հայկական ՍՍՌ ԳԱ» հրատ., 1968, 390 էջ:

REFERENCES

1. **Zaryan R.**, Avetiq Isahakyan, [Avetiq isahakyan], Yerevan, Hayastan hrat., 1974, 125 p.
2. **Tamrazjan H.**, Banasteghtsy ev tshakatagiry, [The Poet and Fate], Yerevan, Sovetakan grogh hrat., 1978, 388p.
3. **Intshikyan A.**, Avetiq Isahakyan, [Avetiq Isahakyan], Yerevan, Sovetakan grogh hrat., 1977, 258 p.
4. **Isahakyan Av.**, Erkeri liakatar joghovatsu 14 hatorov, hator 11, [Complete Works], Yerevan, HH GAA Gitutyun hrat., 2020, 809p.
5. **Isahakyan Av.**, Erkeri joghovatsu 6 hatorov, hator 5, [Collected Works], Yerevan, Sovetakan grogh hrat., 1977, 434p.
6. **Isahakyan Av.**, Aforismner, [Aphorisms], Yerevan, Tigran Mets hrat., 2001, 496 p.
7. **Isahakyan V.**, Hayrs, [Father], Yerevan, HH GAA Gitutyun hrat., 2000, 589 p.
8. **Hakhverdyan L.**, Isahakyan kyanqn u gortsy [Isahakyan's Life and Work], Yerevan, Hayastan hrat., 1974, 219p.
9. **Charents E.**, Erkeri joghovatsu 4 hatorov, hator 2, [Collected Works], Yerevan, Haykakan SSR GA hrat., 1968, 390p.